[

«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների առարկայական մասնախմբերի աշխատանքների

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Անահիտ Խաչատրյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

Սևան 2023

ՆԱԽԱԲԱՆ

Թեմայի արդիականությունը*:* Թեման արդիական է նրանով, որ այս օր հանրակրթական դպրոցի գործունեությունը կարող է հանգեցնել առողջ և մտածող սերնդի կրթությանը և դաստիարակությանը միայն այն դեպքում, եթե ճիշտ և համակարգված կազմակերպվեն և վերահսկվեն հանրակրթական դպրոցի թե՛ ուսումնական և թե՛ մեթոդական աշխատանքները: Ուսումնասիրության նպատակն՝ դպրոցում ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման և վերահսկողության գործընթացների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է և այդ համատեքստում մեթոդմիավորումների գործունեության նոր մոդելի առաջարկումը:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել «դպրոց» սոցիալական ինստիտուտի գործունեության նպատակը, խնդիրները, կառուցվածքը և ներկայացնել կրթական քաղաքականությունը հանրակրթության ոլորտում:

2. Վերլուծել դպրոցի մեթոդմիավորների գործունեությունը, նպատակը, խնդիրները և մեկնաբանել ուսումնամեթոդական աշխատանքների վերահսկողության նպատակը, ձևերը:

3. ուսումնասիրել և վերլուծահամադրաբար ներկայացնել հիմնական դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքի ձևերն ու եղանակները:

Հետազոտության նորույթը.

Հիմնախնդրի վերաբերյալ բազմաթիվ սկզբնաղբյուրներ հանգամանալից վերլուծության են ենթարկվել մեր կողմից:

Ուսումնասիրության օբյեկտը՝ հանրակրթական դպրոցն է:

Ուսումնասիրության առարկան՝ ոսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման և վերահսկողության գործընթացների ուսումնասիրություն:

Հետազոտության տեսական նշանակությունը*:* Հանգամանալից ուսումնասիրվել են հիմնախնդրի վերաբերյալ բազմաթիվ աղբյուրներ և վերլուծության ենթարկվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու զարգացման նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքա-

կանության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է կրթության որակի, արդյունավետության, մատչելիության բարձրացման միջոցով: Կրթությունը կարևորվում է, որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահեն տնտեսության կայացման, լուծման առանցքային գործոններից մեկը:

Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է:

Հանրապետության կրթության համակարգն ընդգրկում է.

- պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի համալիրը,
- այդ ծրագրերն իրականացնող տարբեր տիպի ուսումնական հաս տատությունների ցանցը,
- կրթության կառավարման մարմինների, նրանց ենթակայության հիմնարկների ու հաստատությունների համակարգը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999):

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:

Դպրոցի խորհրդակցական մարմին է մանկավարժական խորհուրդը, որը կազմավորվում է մանկավարժակա նկոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Այն ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

Կա մանկավարժական խորհրդիկազմի ձևավորմաներկու սկզբունք: Առաջին

սկզբունքի համաձայն քառասուն մանկավարժներից ավելի համակարգ ունեցող հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են՝ տն օրենը, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալները, առարկայական մեթոդական միավորումների նախագահները, դասղեկները, ծնողական խորհրդի, հոգաբարձուների խորհրդի մեկական ներկայացուցիչներ, արհմիութենական կոմիտեի նախագահը, առարկայական մեթոդական միավորումների կողմից առաջադրված 3-5 մանկավարժներ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, ինչպես նաև այլ խորհրդակցական մարմինների ներկայացուցիչներ:

Երկրորդ սկզբունքի համաձայն՝ մինչև քառասուն մանկավարժներից կազմված հանրակրթական դպրոցներում բոլոր մանկավարժական աշխատողները համարվում են մանկավարժական խորհրդի անդամներ:

Մանկավարժական խորհուրդը նախարարության սահմանած կարգով, իր կազմից, գաղտնի քվեարկությամբ ընտրում է դպրոցական խորհրդի անդամության թեկնածուներ:

Մանկավաժական խորհրդի գործունեությունը շատ ընդարձակ է: Այսպես համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Նորոշման մանկավարժական խորհուրդը քննարկում է ՀՀկառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Նորոշում: ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954- Ն որոշում:

Հանրակրթական դպրոցի զարգացման ծրագիրը և երաշխավորում է այն խորհրդի հաստատմանը: Դպրոցի զարգացման ծրագիրը ներկայացվում է դպրոցի գործադիր մարմնի՝ տն օրենի կողմից: Եվ մանկավարժական խորհուրդը կարող է առաջարկություններ ներկայացնել և այսպիսով ուղղորդել տնօրենին դպրոցի ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու գործում:

Որպես մանկավարժական խորհրդի աշխատանքների կազմակերպիչ հանդես է գալիս դպրոցի տն օրենը (տն օրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է: Կարևորվում է այն, որ մանկավարժական խորհրդի նիստերը արձանագրվեն անճշտություններից խուսափելու համար: Այդ արձանագրու-թյունները կազմվում է մշտական քարտուղարի կողմից, որի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար:

Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանա-գրությունների բարեխիղճ կազմման համար, նիստի արձանագրությունը՝ կազմվում է եռօրյաժա մկետում, ստորագրվում և վավերացվում է խորհրդի նախագահի կողմից:

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Սակայն իրավիճակային փոփոխության պայմաններում կարող են գումարվել նաև արտահերթ նիստեր՝ տնօրենի, մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի, նախարարության և (կամ) տարածքային կառավարման մարմնի, Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ: Ընդունված է մեկ ուսումնական տարում կայացնել խորհրդի 5 նիստ: Ներդպրոցական ժողովրդավար կառավարման տեսանկյունից կարևոր է այն փաստը, որ մանկավարժական խորհրդի նիստերը բացեն: Իսկ դա նշանակում է, որ հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում չընդգրկված բոլոր մանկավարժները կարող են ներկա գտնվել նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Սովորողներին վերաբերվող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել նաև ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ և այլ անձինք: Ծնողների մասնակցությունը մանկավարժական խորհրդի նիստերին և ընդհանրապես դպրոցի գործունեությանը դպրոց-ընտանիք համագործակցության կարևոր տարր է: Շատ կարևոր է մանկավարժական խորհրդի որոշումների կատարումը: Այդ որոշումների կատարումը ստուգելու համար նշանակվում են վերահսկողներ, վերջիններս ստուգում են կատարված աշխատանքները և արդյունքների մասին զեկուցում մանկավարժական խորհրդի հաջորդ նիստի ժամանակ, որին հաջորդում են քննարկումները: Աշխատանքի այս ոճը խթանում է դպրոցի մանկավարժական կոլեկտիվի գործունեությանը և լիցք հաղորդում սովորողների ուսուցմանն ու դաստիարակությանը:

Այսպիսով հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման գործում դպրոցի խորհրդակցական մարմին հանդիսացող մանկավարժական խորհուրդը իր իրավասությունների շրջանակներում քննարկում և որոշումներ է կայացնում ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերվող մի շարք առանցքային հարցերի վերաբերյալ:

Ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

Դրանցից յուրաքանչյուրը իրականացնում է որոշակի գործառույթներ: Արդի ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցում իրականացվող բարեփոխումների, նորարարական մոտեցումների ներդրման, ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման գործընթացում առաջացած խնդիրների լուծման գործում զգալիորեն մեծանում է առարկայական մեթոդական միավորումների

Դրանք զբաղվում են հանրակրթական դպրոցի մեթոդական աշխատանքների պլանավորմամբ և իրականացմամբ: Մեթոդական աշխատանքըուսումնական

հաստատությունում մանկավարժական կոլեկտիվի և դպրոցի ղեկավարության գործունեության հիմնական ձևերից մեկն է: Ինչպես նշված է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդական միավորման Օրինակելի Կանոնադրության մեջ. «Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են հանրակրթական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով»: Այս առումով, որպես դպրոցի զարգացման կարևոր նախապայման կարևորվում է մեթոդական միավորումների գործունեության արդյունավետության բարձրացումը և հետագա կատարելագործումը:

Մեթոդական միավորումները դպրոցում իրականացնում են մի շարք գործառույթներ և լուծում են բազմաթիվ խնդիրներ: Մեթոդական միավորման գործու- նեությունն անհրաժեշտ է և կարևոր դեր ունի առարկայի դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետության, առանձին տեխնոլոգիաներին տիրապետելու, մանկավարժական գործունության խթանման, ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության, նրա առանձին տարրերի յուրացման համար:

Մեթոդական միավորման դերը ուսուցչի գործունեության արդյունավետության գործում

Մեթոդմիավորումը դպրոցում մեթոդական աշխատանքի կազմակերպման հիմնական խմբային ձևն է:

Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից:

Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:

Ըստ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝

1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց

քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ.

2) քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

4) նպաստում է ուսուցիչների (դասվարների) որակավորման բարձրացմանը.

5) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) նախապատրաստում է ատեստավորման.

6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

8) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

9) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.

10) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

11) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվումեն: Մեթոդմիավորումն իրականացնում էմեթոդական աշխատանքի կազմակերպումն ուղեկավարումը՝ հաշվի առնելով դպրոցի առջև ծառացած խնդիրները, ուսումնական գործնթացի կազմակերպման առանձնահատկությունները յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական զագացման մակարդակը:

Ուսուցչի մասնագիտական կարողունակությունը, դա ստեղծագործ, անհատական, նորը ընդունելու պատրաստակամություն, մանկավարժական նորամուծություններին համարժեք վերաբերմունք է, ինչպես նաև սովորելու կայուն մոտիվացիա ձևավորելու ունակություն է, որը բարելավում է կրթության որակը:

Ուսուցչի կարողունակության ու մասնագիտական զարգացումը կրթության որակի բարձրացման կարևորագույն պայմաններից է:

Մ/Մ -ն աշխատանքն ուղղված է ուսուցչի մասնագիտական աճի ապահովմանը, նրա ստեղծագործական ներուժի զարգացմանը, կրթության մակարդակի բարձրացմանը, դաստիարակությանը, զարգացմանը, սոցիալականացմանը և սովորողների առողջության պահպանմանը:

Մ/մ-ի նպատակն է նպաստել սովորողների անհատական զարգացմանը և բարձրացնել ուսուցչի ստեղծագործական ներուժն ու որակավորումը:

Մեթոդական միավորման աշխատանքի հիմնական խնդիրներն են.

- ուսուցիչներին մեթոդական աջակցություն ցուցաբերել կրթական գործընթացի որակը բարելավող ծրագրերի մշակման և իրականացման գործում,
- բարձր մեթոդական մակարդակի ապահովում,
- ուսուցիչների մասնագիտական զարգացում,
- ստեղծագործական աշխատող ուսուցիչների օրինակելի մանկավարժական փորձի բացահայտում, ընդհանրացում և տարածում,
- ուսումնական գործընթացում ուսումնական, մեթոդական և դիդակտիկ նյութերի և ծրագրային ապահովման ավտոմատացված վերապատրաստման համակարգերի, դասարանների տեղեկատվական աջակցության համակարգերի, տեղեկատվական և գրադարանային համակարգերի ներդրում:

Առաջադրված խնդիրների հիման վրա կառուցվում է մեթոդական միավորման ողջ աշխատանքը:

ՄՄ-ն գործունեության հիմնական նպատակը ուսուցիչների մասնագիտական զարգացման և մեթոդական ուսումնառության ապահովումն է միասնական որոնողական աշխատանքի միջոցով:

Նպատակի իրագործման համար իրականացվում են աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Ուսումնադաստիարակչական գործունեություն.
2. Ուսումնամեթոդական գործունեություն.
3. Կազմակերպական - մեթոդական գործունեություն.
4. Տեղեկատվական - վերլուծական գործունեություն.
5. Խորհրդատվական գործունեություն.

6. Հայտորոշիչ գործունեություն.
7. Խմբագրական - հրատարակչական գործունեություն.
8. Փորձարարական- -նորարարական գործունեություն.
9. Գիտամեթոդական գործունեություն.

Ուսումնադաստիարակչական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ պլանավորում է ուսումնական պարապմունքները անցկացնել ըստ դասացուցակի անհատական պարապմունքների, խմբակների կազմակերպման միջոցով,
- ➔ անցկացնում է ընթացիկ խորհրդատվություններ տվյալ առարկայից մրցույթներ, օլիմպիադաներ, գիտաժողովներ կազմակերպելու վերաբերյալ,
- ➔ անցկացնում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումներ մուտքային, ընթացիկ, ամփոփիչ ստուգումների միջոցով,
- ➔ ղեկավարում է հետազոտական և նախագծային աշխատանքները , կազմակերպում դրանց շնորհանդեսները,
- ➔ անցկացնում է քննարկում բաց դասերի, փոխադարձ դասալսումների արդյունքների վերաբերյալ:

Ուսումնամեթոդական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ կատարելագործում է սովորողների ուսման որակը դասավանդման համար անհրաժեշտ մեթոդական, բաշխման նյութերի, տեսաֆիլմերի օգտագործման միջոցով,
- ➔ զարգացնում է ուսումնական առարկաների դասավանդման մակարդակը անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծմամբ,
- ➔ հարստացնում է կաբինետները ուսումնազննական , թեմատիկ և քննական հարցարանների, տեսաֆիլմերի ստեղծման և մշակման միջոցով:

Կազմակերպական - մեթոդական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ կազմակերպում է ուսուցիչների մասնագիտական զարգացումը առարկայական մրցույթների, գիտաժողովների, սեմինարների անցկացման միջոցով:

Տեղեկատվական - վերլուծական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ վերլուծում է կրթական գործունեության արդյունքները մշտադիտարկման միջոցով,
- ➔ տեղեկացնում է մեթոդմիավորման անդամներին կրթական գործընթացի փոփոխությունների , նոր տեխնոլոգիաների, ուսումնամեթոդական ձեռնարկների մասին սեմինարների կազմակերպման կամ անցկացման միջոցով:

Խորհրդատվական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ օգնություն է ցույց տալիս ՄՄ-ն անդամների , ծնողներին կրթական գործունեությանը վերաբերվող հարցերի շուրջ թեմատիկ կամ անհատական խորհրդատվության միջոցով:

Հայտորոշիչ գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ անցկացնում է հայտորոշում սովորողների գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների զարգացման վերաբերյալ տվյալ առարկայից յուրացվող գիտելիքների որակի հայտորոշման միջոցով:

Խմբագրական - հրատարակչական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ տարածում է մեթոդմիավորման անդամների աշխատանքի փորձը հրատարակման միջոցով:

Փորձարարական- -նորարարական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ մասնակցում է նոր ծրագրերի և մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման փորձարարական աշխատանքներին,
- ➔ մշակում և վերակառուցում է ուսուցման և դաստիարակության նոր ձևերը, միջոցները և մեթոդները համապատասխան մասնագետների օգնությամբ:

Գիտամեթոդական գործունեություն իրականացնելիս ՄՄ-ը

- ➔ ապահովում է ՄՄ-ն անդամների մասնակցությունը դպրոցում կազմակերպվող գիտահետազոտական գործունեությանը,
- ➔ հայտնում է կարծիք ուսուցիչների գիտական աշխատանքների վերաբերյալ:

Այսպիսով ուսուցիչների գործունեությունը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է: Այն նպաստում է ուսուցիչների

մասնագիտական զարգացման, մեթոդական մշակույթի ձևավորման, ուսուցչի ստեղծագործական ներուժի բարձրացմանը:

ՄՄ-ն աշխատանքի հիմնական ձևերն են.

- ՄՄ-ն նիստերը, որտեղ քննարկվում են ուսումնադաստիարակչական հարցերը,
- «կլոր սեղանների» կազմակերպում,
- ուսումնամեթոդական խնդիրների շուրջ տեսական և գործնական սեմինարների անցկացում,
- ուսուցիչների հաշվետվությունները,
- դասախոսություններ,
- զեկուցումներ,
- գիտագործնական համաժողովներ,
- ստեղծագործական բանավեճեր,
- առարկայական շաբաթ,
- հյուրասրահ,
- կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ,
- գործնական խաղեր,
- իրավիճակային ուսուցում,
- դերային խաղեր,
- մեթոդական մրցամարտ,
- մեթոդական գաղափարների տոնավաճառ,
- փոխադարձ դասալսումներ, բաց դասեր,
- մեթոդական վարպետության դասեր,
- «Ակվարիում»,
- որոնողա-ստեղծագործական աշխատանքներ,
- գործնական աշխատանքներ,
- նախագծեր,
- «դաս-համայնապատկեր»
- «Տարվա ուսուցիչ» մրցույթներ,
- մեթոդական փառատոներ,
- այլ մեթոդական միջոցառումներ:

Առարկայական մեթոդմիավորումների մեթոդական աշխատանքը կազմակերպում է

նաև ուսուցիչներին տրվող տնային աշխատանքներով: Առանձնացնենք մի քանիսը.

- օրվա դասի պլանավորում,
- դասի մոդելավորում (հատվածաբար կամ ամբողջական),
- տրված թեմայով դասերի մշակումներ,
- որոշակի թեմայով հետազոտություններ կատարելու ծրագրերի մշակում,
- որոշակի թեմայով գրականության ընտրություն,
- ստուգիչ նյութերի, թեստերի կազմում,
- հուշագրերի, դիդակտիկ նյութերի կազմում, պատրաստում,
- առարկայական, արտադասարանական միջոցառումների մշակում,
- դասերի, արտադասարանական միջոցառումների վերլուծություններ,
- տրված թեմայի, խնդրի վերաբերյալ սեփական փորձի ներկայացում,
- աշխատանք՝ ինքնակրթության համար ընտրված թեմայի շուրջ,
- որոշակի խնդրի շուրջ զեկուցման նախապատրաստում,
- շնորհանդեսի նախապատրաստում,
- սեփական հետազոտությունների շրջանակում ձեռքբերումների ներկայացում,
- որոշակի թեմայով կամ միասնական մեթոդական թեմայով ստեղծագործական հաշվետվություն:

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Հոգեբանները գտել են, որ միայն այն գիտելիքներն են դառնում համոզմունք, որոնք մարդն ինքնուրույն է ձեռք բերում: Եվ եթե գիտելիքների սկզբնական ընկալումը կայուն չէ, ապա հաջորդող աշխատանքը պետք է լինի անհատական և պետք է իրագործվի այն ծավալով ու տեմպով, որ անհրաժեշտ են յուրաքանչյուր անձի: Իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն կրթական գործունեության պայմաններում: Առավել արդյունավետ ձևով այն կազմակերպել հնարավոր է մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով. զեկուցումներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվետվություններ: Այս բոլորը պլանավորվում է նախապես և վերահսկվում է մեթոդմիավորման ղեկավարի կողմից:

Մեթոդական միավորման արդյունավետության գործում ուսուցչի գործունեությունը պայմանավորված է աշխատանքի հետևյալ ձևերով.

- Մեթոդմիավորման հանդիպումների, նիստերի գումարում:
- Մասնակցություն մրցույթների, փառատոների, առցանց հանդիպումներ:
- Փորձի փոխանակում և սեփական ձեռքբերումների ներկայացում:
- Բաց դասեր և միջոցառումներ, վարպետության դասեր:
- Փորձի փոխանակմամբ դասալսումներ:
- Ստեղծագործական, վերլուծական հաշվետվություններ:
- Ուսումնաեթոդական պրոդուկտի ստեղծում:

Մեթոդմիավորման հանդիպումների, նիստերի գումարում

Մ/մ-ը քննարկում է առարկաների ուսումնական աշխատանքային ծրագրերի և թեմատիկ պլանների կառուցվածքի և բովանդակության բարելավման, պարապմունքների անցկացման մեթոդների, բոլոր տեսակի դասընթացների

արդյունավետության և որակի, կրթական և նյութական բազայի բարելավման, որակավորման բարձրացման, ուսումնական նյութերի ստուգման, ստեղծել ուսումնական ուղեցույցներ, տեքստեր և առաջադրանքներ թեստերի, հավաստագրման և այլ ուսումնական նյութերի համար:

Մասնակցություն մրցույթների, փառատոների, առցանց հանդիպումներ

Մ/մ–ն ուսուցիչները մասնակցում են տարբեր մակարդակների, հիմնականում հեռակա մրցույթների: Ուսուցիչները մասնակցում են տարբեր մասնագիտական որակավորումներ բարձրացնող մրցույթների և հաղթում դրանցում: Այս ամենը նմաստում է ուսուցիչների մասնագիտական աճին, ակտիվ ստեղծագործական դիրքերից հանդես գալուն:

Բաց դասեր և միջոցառումներ, վարպետության դասեր

Դրանք իրականացվում են ուսումնական աշխատանքի ծրագրով , որպես կանոն, առարկայական և մեթոդական շաբաթների շրջանակներում: Անցկացման և հաճախելու հիմնական նպատակը դասի ամբողջական տեսլականն է, դրա

ամբողջական վերլուծությունը և համակարգված գնահատումը: Պետք է միշտ հիշել Կ.Դ.Ուշինսկու իմաստուն և գիտականորեն հաստատված կարծիքը. «Փորձից բխած միտքը փոխանցվում է, բայց ոչ բուն փորձը»: Վարպետության դասեր անցկացնելու պրակտիկան ցույց է տվել, որ դրանք թույլ են տալիս ցույց տալ և գնահատել ուսուցչի էրուդիցիան, նրա արվեստը, իմպրովիզացիոն կարողությունները, կատարողական հմտությունները:

Ստեղծագործական, վերլուծական և հաշվետվություններ

Անհատական ինքնակրթությունը, ուսուցիչների համար կրթական ռազմավարությունների սահմանումն ապահովվում է սեփական մանկավարժական ներուժի շարունակական ուսումնասիրությամբ, որը հիմնված է մասնագիտական գործունեության ինքնավերլուծության վրա: Սեփական գործունեության վերլուծությունը՝ որպես մանկավարժական փորձի ըմբռնման գործընթաց, ամենակարևոր և ինքնատիպ գործիքն է աշխատանքում առկա դժվարությունները հաղթահարելու համար, ինքնակատարելագործման խթան:

Ստեղծագործական զեկույցը թույլ է տալիս բացահայտել ուսուցչի մասնագիտական գործունեության խնդրի արդիականությունը, ցույց տալ մանկավարժական փորձի նորարարությանը, ինքնատիպությանը, դրա հետևողականությունը և արդյունավետությունը:

Ուսուցիչների ստեղծագործական հաշվետվությունները, որպես կանոն, անցկացվում են մեթոդական շաբաթվա շրջանակներում: Թղթապանակ - ուսուցչի մասնագիտական գործունեության և իրավասության արտացոլում: Սեփական գործունեության վերլուծությունը հավաքվում էթղթապանակում:

Ուսումնամեթոդական պրոդուկտի ստեղծում

Մեթոդական մշակումները մանկավարժական գործունեության արդյունքների ներկայացման ձևերից են: Դրանք տպագրվում են առարկայական ամսագրերում և առանձին գրքույկներում: Աշխատանքի այս բոլոր ձևերը հանգեցնում են սովորողների ամբողջական անհատականության զարգացմանը և գիտելիքների որակի բարձրացմանը: Էկրանին կարող եք տեսնել առաջին կիսամյակի արդյունքները:

Մեթոդական միավորումը նպաստում է նորարարական, հետազոտական, փորձարարական և գիտական գործունեությանը, խորացնում է ընդհանրացված գիտելիքները ընդհանուր մանկավարժության, դիդակտիկայի, հոգեբանության, մշակութաբանության, մեթոդիկայի, ներառական կրթության, կրթության փիլիսոփայության, մարդաբանական մանկավարժության և այլնի վերաբերյալ:

Եզրակացություն

Մեթոդական միավորման գործունեության նպատակն է պայմաններ ստեղծել

- ուսուցչի մանկավարժական հմտությունների,
- յուրաքանչյուր ուսուցչի որակավորման բարձրացման,
- անհատական մեթոդական համակարգերի ձևավորման համար:

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևալ խնդիրները.

- տարբեր տեսակի դասերի անցկացման մեթոդաբանության կատարելագործում,
- կրթական, մեթոդական և նյութատեխնիկական աջակցություն,
- բարձր մասնագիտական մակարդակով ուսումնական, մեթոդական և փորձարարական աշխատանքների կազմակերպում և անցկացում,
- կրթական և դաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում.

Մ/մ գործունեության հիմնական ուղղություններ կարող են լինել.

- կարգավորող, նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրությունը,
- ուսուցանվող առարկայի տեսության, դասավանդվող առարկայի մեթոդաբանության խորը ուսումնասիրությունը,
- առարկայական ծրագրերի, դասագրքերի, գիտամանկավարժական նորույթների ծանոթացումը,
- առարկային տիրապետելու վերաբերյալ սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների վիճակի համակարգված ուսումնասիրություն և առարկաների կրթական գործունեության արդյունքների վերլուծությունը,
- առարկայական ուսումնական, մեթոդական և դիդակտիկ նյութերի, աղբյուրների պատրաստումը և ընտրությունը,
- առարկայական արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը:

Այսպիսով առարկայական մեթոդմիավորումը կատարում է հետևյալ գործառույթները

ուսուցչի հետ սերտ համագործակցելով.

1. Քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ
2. Ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և ներդնում պրակտիկ աշխատանքում
3. Նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը
4. Կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ
5. Ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ
6. Սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն և ներկայացնում կարծիք
7. Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին
8. Կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ,այլ միջոցառումներ
9. Առարկայական դրվածքների, նախընտրած մեթոդի կիրառմամբ դասերի անցկացման, արդյունքների վերլուծության պատասխանատուն է
10. Հոսքային դասարաններում հոսքային առարկաներից փոխադրական քննությունների անցկացման համար թեստերի /գրավոր աշխատանքի համապատասխան նյութեր կազմելու, տրամադրելու/ կազմման պատասխանատուն է (թեստերի կազմման ժամանակ պարտադիր հետևում է չափորոշիչների հստակ կազմմանը և թեստերին կից դրանց ներկայացմանը)
11. Գրավորների տեսակի, քանակի ըստ սահմանված կարգի բանավոր գնահատականների քանակի պահպանման պատասխանատուն է
12. Պարտավոր է համեմատել գրավոր աշխատանքներում առկա գնահատականները մատյանում նշանակվածի հետ

(անհամապատասխանություն հայտնաբերելու պարագայում կազմում է արձանագրություն, վերջինս քննարկում մեթոդմիավորման նիստի ժամանակ)

13. Կիսամյակի ընթացքում վերստուգել թեմատիկ, աշխատանքային տետրերը, բառատետրերը, գրականության տետրերը (յուրաքանչյուր դասարանում կիսամյակի ընթացքում առնվազն մեկ անգամ)
14. Պարտավոր է ունենալ մասնախմբի բոլոր անդամների համար փաթեթներ
15. Դասալսումներ, վերլուծություններ
16. Ներկայացնել հաշվետվություն /կիսամյակային, տարեկան/ կատարած աշխատանքների վերաբերյալ
17. Գրավոր առաջարկություն է ներկայացնում ուսումնական հաստատության տնօրենին լավագույն ուսուցիչներին պատվոգրերի արժանացնելու, խրախուսելու նպատակով:

Գրականության ցանկ

1. Հեղինակներ՝ Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Մարինե Մանուկյան Մեթոդական աշխատանքը դպրոցում, Երևան,2014թ.:
2. Սարգսյան Աննա Հոդված «Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր»
3. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ
4. ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ՝ 15, 29, 30, 36, 38, 57, 58, 82, 83 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723
5. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, 18 (7-րդ մաս) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149890
6. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 4, 5, 6, 12, 19, 20, 27, 28 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140362
7. «Լեզվի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 1-5 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121644

8. Աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ՝ 13, 14, 23, 38, 84, 84.1, 85, 89, 109, 112, 113, 114, 115, 159, 172, 173, 174, 176 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152137
9. «Ընտանեկան օրենսգիրք», հոդված 24 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152573
10. Հանրակրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149792
11. ՀՀ կառավարության 14.10.2010թ. «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկ և նկարագրեր» հ. 1391-Ն որոշում, 7-րդ բաժին https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122121
12. ՀՀ կառավարության 27.12.2012 թ. «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգ» հ. 1667-Ն որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151368
13. Ամիրջանյան Յու. Սահակյան, Ա. Ս. Մանկավարժություն, Ե. 2005, 446 էջ:
14. Առաքելյան Մ. «Առարկայական մեթոդական միավորումների գործունեության հիմնական ուղղությունները արդի պայմաններում», Մանկավարժական միտք ամսագիր, Տաթև Գիտակրթական համալիր, Երևան 2015թ. N 3, 248 էջ:
15. Թոփուզյան Ա., «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»,
16. «Մանկավարժական միտք» հանդես, N3-4, Երևան 2012 թ., էջ 14:
17. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի Կանոնադրություն, 2010թ. օգոստոս 5:
18. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց/ ՀՀ ԿԳՆ կազմ.՝ Գ. Մելիքյան, Ն.
19. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց/ ՀՀ ԿԳՆ կազմ.՝ Գ. Մելիքյան, Ն.